

*ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Էկոլոգիայի Բնապահպանություն և Բնօգտագործում
ամբիոնի բենչմարկինգի համար անհրաժեշտ դասավանդվող առարկայի
համեմատական բնութագիր*

Գործընկեր ԲՈՒՀ – Իտալիայի Տուշայի համալսարան

Դեպարտամենտ – Շրջակա միջավայրի և գյուղատնտեսական գիտությունների

Առարկայի անվանումը ԳԿՄԿ-ում՝

- *Լանդշաֆտային պլանավորում,*
- *Տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներ և կառավարում,*

Դասավանդողներ - աշխարհագրական գիտությունների թեկնածուներ՝ Շ. Գ.

Ասմարյան, Վ. Ս. Մուրադյան

Առարկայի անվանումը գործընկեր ԲՈՒՀ-ում՝

Ճշգրիտ գյուղատնտեսություն

Դասավանդող՝ Իտալիայի Տուշայի համալսարանի գյուղատնտեսական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ***Ռաֆայել Կազա***

Իտալիայի Տուշայի համալսարանի առարկայական ծրագրերն ունեն հետազոտական
բնույթ և մագիստրոսական կրթության փոխկապակցվածությունը հիմնարար և
կիրառական հետազոտությունների հետ, որոնք իրականացվում են Իտալիայի
Տուշայի համալսարանում խիստ նման են ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային
հետազոտությունների և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ համատեղ ամբիոնի համատեղ
աշխատանքին:

Այստեղ ևս գիտահետազոտական աշխատանքները կրում են կրթական կորիզ, որի
շնորհիվ մագիստրոսական և հետբուհական թեկնածուական թեզերի հայցորդները

անմիջական մասնակցությունն են ունենում գիտահետազոտական աշխատանքներին և ստացվող արդյունքները կիրառում են իրենց ավարտական դիպլոմային աշխատանքներում:

DAFNE և DIBAF դեպարտամենտներում դասավանդվում են ագրարային և շրջակա միջավայրի գիտությունների մագիստրոսական առարկաներ, որտեղ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նորագույն տեղեկատվական և հեռազննման տեխնոլոգիաները:

Արբանյակային և աերոհեռազննման տեխնոլոգիական հիմունքների և հմտությունների դասավանդումն իրապես լուրջ ներդրում է կրթական ոլորտում, քանի որ վերջիններիս գիտելիքներով օժտված հմուտ և արհեստավարժ մասնագետների պահանջը գյուղատնտեսության մեջ մեծ է ոչ միայն Եվրոպայում, այլ նաև Հայաստանում:

Իտալիայում տեղական գյուղատնտեսական համակարգերում, մասնավորապես խաղողի այգիների և այլ ցանքատ

արածությունների վիճակի մոնիթորինգային համակարգերում հեռազննման տեխնոլոգիաների ներդրման մասշտաբներն ու տեմպերը վկայում են արհեստավարժ մասնագետների առկայության մասին, որն այդ երկրում կրթական ծրագրի արդյունավետության ինդիկատոր է:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Բնապահպանություն և բնօգտագործում ամբիոնում դասավանդվող ներքոհիշյալ *«Լանդշաֆտային պլանավորում»*, *«Տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներ և կառավարում»* առարկաները դասավանդվում են ապագա մագիստրոսներին ծանոթացնելով հողօգտագործման էֆֆեկտիվության գնահատման, էկոլոգիական քարտեզագրման և լանդշաֆտի գյուղատնտեսական նպատակներով

ռացիոնալ պլանավորման և արդյունավետ կառավարման գործում GIS տեխնոլոգիաների կիրառման հմտություններին:

Տուշայի համալսարանում առավել ուշագրավ է ճշգրիտ գյուղատնտեսության հիմունքների դասավանդումը, որտեղ աերո և արբանյակային տեխնոլոգիաների կիրառման հմտությունների ուսուցումը կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչ է հանդիսանում:

ՀՀ-ում ճշգրիտ գյուղատնտեսության հիմունքների և տեխնոլոգիական հմտությունների ուսուցման նպատակով առաջարկվում է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Բնապահպանություն և բնօգտագործում ամբիոնում դասավանդվող *Տարածական տեղեկատվական ենթակառուցվածքներ և կառավարում* առարկայում (դասավանդվում է 32 ժամ (24 + 8 գործնական) տրվում 4 կրեդիտ) կատարել փոփոխություններ՝ եղած 32 ժամից 8 ժամ (4 + 4 գործնական) տրամադրելով հեռազննման տեխնոլոգիաների կիրառման հմտությունների ուսուցմանը:

Կազմեցին՝ դասախոսներ

Շ. Ասմարյան

Վ. Մուրադյան